

ԳԵՐՈՎ ԶՈՒԲՅԱՐ: ՎԵՊԵՐ և ՊԱՏԿԵՐՆԵՐ: Փոքր քառածալ, 292 էր.
տառ № 10, թուղթը հասարակ: Տպարան Տէր-Աբրահամեանի:
Ռուսով, 1889 թ., զինը 1 ր. 50 կոպ.

Պ. Զուբյարի գիրքը կարդացում՝
է հետաքրքրութիւնով և տալիս է մի
քանի խորհրդածութիւնների նիւթ:
Դիրքը բաղկացած է 6 երկերից, ո-
րոնցից միան երկուս՝ «Բարեգործ-
ները» և «Մահտեսի Սարգիսը» իրրև
բաւականին լաջողած և լուրջ վէպեր
առանձին ուշադրութեան արժանի են:

Ալդ վէպերի մէջ երիտասարդ հե-
ղինակը ցուց է տալիս հասարակակիան
երևովթները դիտելու և ըմբռնելու
տաղանդ, նա ներկայացնում է աղդ
վէպերի մէջ զանազան դասակարգե-
րից առած անձերի մի մեծ շարք:
Առաջին վէպում նա նկարագրում է
քաղաքավին կեանքը, իսկ երկրոր-
դում՝ գիւղական:

Մանօթ վլնելով իւր նկարագրած
կեանքի երևովթներին և զգալով նո-
ցա բնական զարգացումի ուժը—հե-
ղինակը իւր վէպի մէջ հետեւում է
գործողութիւնների կատարելուն և
գրում է իւր հերոսների պատմու-
թիւնը, ինչպէս կեանքն է թելադ-
րում: Ալդ պատճառով վէպերը վերջ
ի վերջու դուրս են դալիս տարբեր
ան դիտաւորութիւններից, որ ունե-
ցել է ըստ երևովթին ինքը հեղինակը,
Զորօրինակ՝ «Բարեգործներ» վէպի մէջ
նա չէ կարողանում համոզել ըն-
թերցովին՝ թէ օրիորդական միջնա-
կարդ կրթութիւնը մնասակար է, չը
նախելով նորան, որ հեղինակը թէ
վէպի վերնագրով և թէ բժիշկ Մո-
րադեանցի բերանը դրած ճառով

ցանկանում է ասել աղդ բանը: Ենոր-
հիւ վէպում բերած փաստերի, ըն-
թերցովը հեղինակից տարբեր գա-
ղափար է կաղմում հասարակական
երևովթների նշանակութեան մասին:

Հեղինակը չէ վախենում անսպա-
սելի դրութիւններ ստեղծել, նոր
հանգոցներ և կշկուռներ մտցնել իւր
վէպերի մէջ: Ալդ լատկութիւնը կա-
րող է կեանք ուսումնասիրողի, վի-
պասանի համար մեծ արժանաւորու-
թիւն համարել: մինչեւ հնարող և
վերացական վիպագրովին դա կարող
էր վնասել—զարձնելով վէպերը և
նոցա հերոսների արարքը մտացածին:

Անցնենք վէպերին: Ահա «Բարե-
գործներո վէպի բոլանդակութիւնը:

Նոր նախիջնանում բացւում է
մի գիշերօթիկ օրիորդական զպրոց,
ուր աշակերտում են զանազան դա-
սակարգի աղջիկներ: Աշակերտների
թւումն է և խեղճ կօշկակար կարա-
պետի աղջիկ Սառան, որը կազմում
է վէպի գլխաւոր հերոսուհին: Սառան
մնալով մի քանի տարի դպրոցում՝
կամաց կամաց մտանում է այն խեղճ
տնակը, որի մէջ ինքը ծնւել է և
ընտելանում է աւելի փափուկ և շքեղ
կեանքի և աւելի մեծ պահանջների,
քան նորան կարող է տալ իւր հօր
տնակը և հասարակութիւնը: Դպրոցի
աշակերտուհիների միջոցով ընկնում
է նաև հարուստ ընտանիքներ, որուել
մի անգամ նա լսում է սալոնական
մի երիտասարդի զւարձախօսութիւ-

նը և վետու սիրու առաջարկը, որից մատաղահաս Սառան շնորհ է. բայց վետու համոզւելով, որ երիտասարդի առաջարկածը հետեանք է միան թեթևութեան և փչացած լինելուն—հւանդանում է:

Դպրոցում Սառալին հովանաւորում է վարժուհի Հեղինէն, որը ներկապայնում է մեր առաջ իրրե դաստիարակուհի բարի, ճիշդ իւր գործին, բայց միենուն միջոցին պաշտօնական, դուրկ զգացումների ան բուռն շարժումներից, որ կազմում են աւելի աշխուժ բնաւորութիւնների լատկանիշը և կեանքը:

Հեղինէն մարդու է գնում բժիշկ Մուրադեանցին, մի երիտասարդի, որին հեղինակը աշխատում է ցուց տալ իրրե լուրջ մտածող հասարակական շահերի համար:

Սառան թէ իւր հիւանդ ժամանակ և թէ դպրոցից դուրս գալուց վետու, հանդիպելով լաճախ բժիշկ Մուրադեանցին, համոզւելով նորա բարութեան, լրջութեան և համեստութեանը՝ սկսում է կամաց-կամաց սիրահարել նորա վերա և տեսնելով որ ալդ սիրու զարգացումը լաւ հետեանք չէ խոստանում, թողնում է առ միշտ իւր ալդ ծանօթների շըրջանը և զառնում է իւր հօր անշուք տնակը: Ծնողները ուրախանում են, գգում են, պատում են Սառալին, բայց չեն կարողանում մարսել նորա դիրքը, գոլութիւնը, սովորութիւնները, նա մանաւանդ մայրը, որ դեկապարում է իւր շրջապատողների բամբասանքների իմաստով: Հայրը չը կարողանալով հասկանալ Սառալին, աճու ամենալի սիրում է սաս-

տիկ իւր աղջկան. բայց կնոջ դէմ չէ կարողանում երկար խօսել: Սառան ինքը ևս զգում է իւր անքարմար վիճակը: Ակզրում նա փորձեր է անում գրականութիւնով զբաղւմու, թարգմանում է վեպեր, ուղարկում է մի հաւ լրագրի, վետու ձեռնարկում է ինքնուրուն մի վէպ գրելու, որ չէ վաջողուտմ և վետու, համոզւելով, որ գրական աշխատանքը ապրուստի միջոց չէ կարող տալ—սկսում է կարով զբաղւել: Ագդ միջոցին Սառալի մայր Շուշանը աշխատում է իւր աղջկան տաքացնել Միքայէլ անունով մի գործակատարի վերաբ Որչափ էլ Սառան հոգւով, սըրտով դէմ է Միքայէլ նման մի փեսացուին, բայց և ախտէս, ընկճւած հանգամանքներից՝ համաձանտում է նորան մարդու գնալու: Միքայէլը անկիրթ մարդ է, մի քանի արտաքին ձևեր սովորած Աստրախանում և բոլորովին անլարմար Սառալի հենակցութեան: Միքայէլը իւր գործատուի սնանկութեան պատճառով զրկում է տեղից և նոր տեղ չի կարողանում ստանալ, որովհետև պահանջում են, որ գործակատարը աւելի պատրաստած մարդ լինի: Երկու տարի Միքայէլը մի կերպ կառավարում է տունը, սպառում է կիտած պաշարը և վերջապէս անձնատուր է լինում արքեցութեան:

Սառան Միքայէլի հետ չէ տեսնում քաղցր օրեր: Նոցա փոքրիկ աղջիկ Անիկը ծնում է և մնանում հիւանդ, թուզ, և վերջապէս մեռնում է: Միքայէլի արքեցութիւնը և կասկածաւոր անձերի հետ ընկերակ-

ցութիւնը հասցնում են նորան վերջապէս բանտի:

Սառան ինքը տկարացած, թուլացած աղքատութեան մէջ, զրկւած իւր զաւակից, զրկւած սիրուց—մաքառում է քաղցածութեան դէմ: Յուսչունենալով կար անելուց անքան շահել որ ապրի, համաձայնում է երկաթուղու կաբարանում քարածուխ կրել, ենթարկմալով ցրտի, զրկանքների և վերջապէս ուժասպառ թողնում է ալս աշխարհը: Աորանով վերջանում է վէպը:

Եւ ապապէս Սառան, կականան օրիորդական զպրոցի արդ սանուէին, ներկարանում է մեր առաջ մի անձնաւորութիւն, որ փորձ է անում և գրական աշխատանքով զբաղել և կար անել և տան գործ անել և քարածուխ կրել և դարձեալ չէ կարարանում ապրել ալս աշխարհում չնորհիւ ճախորդ հանգամանքների:

Ակիմ մի ապապէս խնդիր դնենք: Եթէ Սառան կականան զպրոցի սանուէի չըլինէր—արդեօք լաւ կ'անցնէր նորա կեանքը գործակատար Միքայէլի հետ, որին ոչ ով տեղ չէ տալիս նորա տպիտութեան պատճառով: Անկիրթ Սառան նորանով կը զանազանէր կրթւած Սառակից, որ գուցէ անքան սաստիկ չէր զգալ իւր կեանքի վերին սաստիճանի անտանելիութիւնը և կը վերապրէր բոլորը իւր ճակատադրին: Բայց Միքայէլի հետնա և չէր ունենալ կեանք:

Անու ամենաճնիւ հեղինակի չօշափած խնդիրը գործնական է, որով հետև վերաբերում է մեր դպրոցական գործի նպատակաւարմար կազմակերպութիւն առաջ:

«Բարեգործներու վէպում բաւականին լաջողած տիպ է ինքը հերոսուհին՝ Սառան, որի կեանքը իսկապէս սկսում է հետաքրքրել ընթերցողին. բայց վէպի երկրորդ կիսում մնում են պակաս և չը նկարազրած տեղեր, որոնք մասսամբ լրացնուում են ընթերցողի երևակալութիւնով:»

Բնական են Սառակի ծնողները, թէ բարի կարապետը և թէ սահմանափակ Շուշանը:

Առհասարակ «Բարեգործները» չաշողած և հետաքրքրական վէպ է:

Անցնենք միւս վէպին, որ կրում է «Մահտեսի Սարգիս» վերնագիրը:

Գիւղացի Գրիգորը հասակն առած աղջու մարդ էր և աչքի փուշ էր բոլոր վաշխատուների և կաշառակերների համար: Նա ունէր մի աղջիկ, որին սիրում էր նորահարեան կարօն: Գրիգորը իւր մըստքերին արձագանք գտնում էր գիւղական ուսուցիչ Սանքէգեանցի կողմից: Բայց երկուսն էլ անզօր էին մի որ և է դրական փոփոխութիւն մտցնելու գիւղում: Գրիգորը որչափ և դէմ էր հին տաճուտէր կաշառակեր Մահտեսի Սարգսին, անու ամենաճնիւ ոչ միան չը կարողացաւ արգելել նորա վերնատրութիւնը, ալլ և թշնամացրեց իւր հետ: Ազդ թշնամութեան զարդացումը կազմում է վէպի առաջին մասը: Մահտեսի Սարգիսը աշխատում է չարչարել Գրիգորին: մի անդամ վճարած հարկերը նորից պահանջում է ստանում է: Նա հետառում է Գրիգորին, երբ սա դնում է անտառը գաղանի փալա կտրելու, և ան տեղ նորան ստանում է տանելու դատարան: Գրիգորը սաստիկ կատաղած՝

բռնում է Մահտեսու օձիքից սկսում է խեղելմինչն որ սորա ձանը կարւում է, Գրիգորը չէ սպասում ուշքի եկած Մահտեսու վրէժին, շուտով հիւանդանում է և մեռնում Գիւղում Մահտեսի Սարգիսը անուհետեւ դառնում է իւր արբանեակներով միասին (որոնց թւումն է և տէր-Եսապին) անսանձ. և տիրապետող Նորան թելադրում են, (տէր-Եսապին), որ լաւ կ'անի եթէ պսակվի և մատնացոց են անում հանգուցեալ Գրիգորի աղջկակ՝ կարօի հարսնացու Մաշօի վերաբ Մահտեսին համաձայնում է, թէ և համարում է աղդ բանը դժւար իրավործելի, Մահտեսու երկրորդ նպաստակին ճգույր և հասնելը կազմում է վէպի երկրորդ մասի բովանդակութիւնը. Հանգամանքները նպաստում են Մահտեսուն, որովհետև Գրիգորի ընտանիքը, զրկելով աշխատող ուժից, աղքատանում է օրից օր և հասնում է չքաւորութեան վերջին աստիճանին. Խոկ կարօն, թէ և մասամբ օգնում է, բաց ինքն էլ ազատ չէ իրանց տան հոգսերից. Բանը վերջանում է նորանոլ, որ Գրիգորի աղջիկը համաձայնում է հարուատ Մահտեսուն մարդի գնալ. կարօն կատաղում, սարսափում է և մի օր, կիսահարբած դրութեան մէջ, կրակ է տալիս Մահտեսու դէզը, նպատակ ունինալով հրդեհել ամբողջ տունը. Նորան բռնում են և ուղարկում են Սէրիբ.

Վէպը կարդացուում է հետաքըրքը. Քրութիւնով և մի քանի տեղեր խորհրդածութեան նիւթ են տալիս. Յաջող զածում է — կարօի, իրան խորթ զգալ իւր նախկին ընկերակից գիւղացի, իսկ ամժմ կաղարեան ձեմա-

րանում ուսում առած Ասճբէզեանի հետ. լաջող է անտառի մէջ պատահած Գրիգորի և Մահտեսու կուլի տեսարանը. շատ լաջողւած է կարօի հետ պատահած գինետան տեսարանը և դէղ կրակ տալը. Գետաքրքրական է գիւղական վարչութեան մէջ կատարւած տեսարանը, երբ Գրիգորից կրկին պահանջում են մի անդամ վճարած հարկը.

Վէպը թուղացնում են հետևեալ պակասութիւնները. — Գրիգորի և Սանքեանի տիպերը թուլ են. գիւղացի Գրիգորը բարձր ոճով է խօսում (եր. 177, 185). Նորա աղջիկ 18 տարեկան Մաշօն սկիզբները շատ է միամիտ խօսում (188, 191, 193). բոլորին կարելի է դէն ձգել մի քանի չափոնի տաղեր 198 երեսում. գինեվաճառ Ղուկասը անպէս է նկարագրւած, որ, կարծես, նա աւելորդէ այդ վէպում և շատ էլ լաջող չէ. Նորապէս քիչ գեր է կատարում և նազլու խանը. Խնքը՝ Մահտեսի Սարգիաը բաւականաչափ որոշ տիպ չէ. Սանքեանի խօսակցութիւնները մասամբ անքնական են. Պորօրինակ՝ լուսի և խաւարի մասին անտեղ, ուր գրւած է չէ սազում իրեն խօսակցութիւն (եր. 172) և ալին:

Ճեղինակը ի չարն է գործ զնում նկարագրելու և բառեր գործ ածելու ժամանակը. չափաղանցութիւնները տալիս են գրւածքին արհեստականութիւն. Շատ սկսում է աւելրոդ տեղը և շատ լաճակի խօսել եղանակի մասին. Պորօրինակ՝ «Բարեգործներու վէպում» համարեա ամեն մի գլուխ սկսում է եղանակի նկարագրութիւնով. Աւելուսդ են լատիներէն բա-

ուրը (Եր. 220, 226, Փրանսերէն
սխալ bon monde 35 երևոսմ):
Լաւ կը վիճէր, փոխանակ տառը դա-
սակարգ, ասել՝ հասարակ դասակարգ,
Ի վերջու պէտք է լատնենք, որ տպա-
գրական սխալները անհամար են:

Բացի վիշտակած երկու վէպերից, պ. Զուբարը իւր գրքում տալիս է մի սանտիմնատալ և անփաջող վէպիկ՝ «Նա սպասում է դեռ» և երեք ալլարանական փորձեր—«Մի վարդի պատմութիւնը», «Թիմար ոչխարներ» և «Մոռացւած շուն»; Ալլարանական գրւածները շատ դժւար են լաջողությում, մինչդեռ նոքա մնած ժամանակ և ուղեղի գործողութիւն են պահանջում մարդուց; Պ. Զուբարը գեղեցիկ երեսներ է նւիրում ընթերցողին

Ալարդի պատմութեան» մէջ, կածող-
ւած խօսակցութիւններ՝ «Յիմար ոչ-
խարների» մէջ և դարձեալ չէ հաս-
նում իւր նպատակին: Ընթերցողը
չէ հասկանում վարդ մօր և վարդ
աղջկակ բնական դրութիւնը, չէ կա-
րողանում ըմբռնել թէ ինչպէս դափ-
ները, պատառելով ոչխարներին, հան-
գիստ են թողնում ակծերին և ալյն:
Վերջացնելով մեր խօսքը, պէտք է ա-
սենք, որ պ. Զուրաբը իրք կեանքի հան-
դամանքների վլապագրող, հասարակա-
կան երևութների և անձնաւորութիւն-
ների վիճակը քննող, հացի խնդիրը
և բարովական պահանջների խնդիրը
միմեանց հետ շփող՝ լարգելի հիւր
է մեր գրականութեան համար:

• 41 •

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ.

Վալլիամ Շեքսպիր: ՀԱՄԼԵՏ. ողբերգութիւն հինգ արարուածով: Թարգմանութիւն Սենեկերիմ Արծրունու, Հրատարակութիւն Բարսեղ Քամալեանցի: Թիֆլիս, տպ. Ռօտինեանցի, 1889 թ.:

Ովկէ ՀՆԱՐԵԼ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ. Թարգմ. Սրուանդ Ղազարեանցի Թիֆլիս, տպ. Վարդանեանցի. 1888թ..

Տիգօ. ՂԱԼԻ ԱՐԱԹՆԵՐԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ.—Ճպատըս Քօլաս կտրի Թիֆիս, տպ. Մարտիրոսեանցի. 1889 թ..

Բարպետան Աւետիք, դօքտօր բժշկականութեան, ԲԱՐԱԿԱՑԱԼ-ԹՕՔԱՆ-
ՏԸ ՏԱՐԱՓՈԽԻՒԿ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ է. Նորա տարածման առաջն առնե-
լու միջոցներ, Հբապարակական ընթերցանութիւն, Թարգմ. Լևոն ՄԵԼք-
Աղամենին՝ հեղինակի խմբադրութեամբ, Թիֆլ. տպ. Մարտիրոսեանցի 1889.

Арасханянъ Ав. д-ръ гос. н. Страсб. ун. Закавказские шелкомотальные заводы. Изданіе Кавк. общ. Сельск. хоз. Тифлісъ, 1889 г.